ՄՀԵՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ծնվել է 1974թ. նոյեմբերի 4–ին Երևանում:

Կրթությունը

1996-1999թ.- ԵՊՀ պատմության ֆակուլտետի Նորագույն պատմության ամբիոնի ասպիրանտ

1991-1996թ. – ԵՊՀ Պատմության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժին, միջազգայնագետ-պատմաբանի որակավորում

Մասնագիտական դասընթացներ

2000թ. - Թաֆթսի համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոց՝ Մեդֆորդ, Մասաչուսեթս, ԱՄՆ

2005թ. - Ջ. Մարշալի անվան Եվրոպական կենտրոնի «Ահաբեկչության դեմ պայքարի և անվտանգության խնդիրների ծրագիր», Գարմիշ-Պարտենկիրխեն, Գերմանիա

2011թ.- Եվրոպական ուսումնասիրությունների Եվրոպայի քոլեջ՝ Բրյուգե, Բելգիա

Աշխատանքային գործունեությունը

2017-2018թթ. - ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության Մշտական ներկայացուցչի տեղակալ, Նյու Յորք, ԱՄՆ

2015-2017թթ. - Ժնևի ՄԱԿ գրասենյակում և այլ միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչության Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, Ժնև, Շվեյցարիա

2009-2015թթ. - ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության Եվրոպական միության բաժնի վարիչ

2006-2009թթ. - Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպանությունում Առաջին քարտուղար, Լոնդոն

2005-2006թթ. - ՀՀ ԱԳՆ Միջազգային կազմակերպությունների վարչության ՄԱԿ-ի բաժնի վարիչ

2001-2004թթ. - ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունում երկրորդ քարտուղար, Նյու Յորք, ԱՄՆ

1998-2001թթ. - ՀՀ ԱԳՆ Միջազգային կազմակերպությունների վարչության ՄԱԿ-ի բաժնում կցորդ, երրորդ քարտուղար

Դիվանագիտական աստիճանը

ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար

Օտար լեզուների իմացություն

անգլերեն, ռուսերեն

Ընտանեկան կարգավիճակ

Ունի երկու դուստր:

ՀՀ նախագահի օգոստոսի 13-ի հրամանագրով նշանակվել է Միավորված ազգերի կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ (նստավայրը՝ Նյու Յորք):